Քննարկելով Նորակերտ համայնքում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքները և հաշվի առնելով հայտնաբերված խախտումները, դրանք են՝

1. Խախտվել է ՀՀ կառավ. 29.12.2005 թ. 2335 – ն որոշման հավ. 1 – ի 3 և 4 կետերի պահանջները:
2. Խախտվել է ՏԻՄ մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի 2.1 կետի պահանջները:
3. Խախտվել է ՏԻՄ մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի 2.2 կետի պահանջները:
4. Դեռևս չվարձակալված գյուղ.նշանակության հողերի համար մրցույթ չի հայտարարվել, <<ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշում>> 44-րդ կետ /հողերը վարձակալության են տրամադրվում մրցույթով: Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են ինչպես վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի նախագիծը, այնպես էլ մրցույթով տրամադրվող հողամասի հատակագծի նախագիծը՝ որպես պայմանագրի նախագծի հավելված:

Հայտնաբերված թերությունների վերաբերյալ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հանձնարարել հաշվապահին այսուհետ գործուղման թերթիկները լրացնել լրիվ և հաշվարկները կատարել ճիշտ:
2. Այսուհետ օրենքով սահմանված կարգով կազմակերպել տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:
3. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ կազմել ժամանակացույց, իսկ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ:
4. 2015 թ-ի հունիսի 10-ին <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթով տալ հայտարարություն Նորակերտ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված գյուղ. նշանակության վարելահողերի վարձակալության մրցույթի վերաբերյալ, որը տեղի պետք է ունենա 2015 թ-ի հուլիսի 14 –ին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ավագանու անդամներ՝

3. Գ. Սարգսյան
4. Վ. Սիմոնյան
5. Վ. Վարդանյան
6. Կ. Ղազարյան
7. Մ. Հակոբյան

Նորակերտ համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան